ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-122-30.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-122-30.04.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) քննարկվող գործող օրենսգրքի հոդվածը թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով ստորև ներկայացված հանգամանքները:

Նախագծով առաջարկվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով գրքերի ընթերցանության դեպքում դատապարտյալին, որպես խրախուսանքի միջոց, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 81-րդ հոդվածով սահմանված կարգով տրամադրել կարճաժամկետ մեկնում՝ սոցիալական վերականգնման նպատակով:

Հարկավոր է ընդգծել, որ առաջարկվող կարգավորումը չի բխում կարճաժամկետ մեկնման ինստիտուտի գաղափարական էությունից:

Այսպես, օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատապարտյալին, բացառությամբ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքի, կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում՝ **անձնական բացառիկ հանգամանքների (մերձավոր ազգականի մահ կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, տարերային աղետ, որն զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին) դեպքում, ինչպես նաև սոցիալական վերականգնման նպատակով:** Կարճաժամկետ մեկնում տրամադրվում է ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ՝ **հաշվի առնելով դատապարտյալի անձը և նրա դրսևորած վարքագիծը, կատարած**

հանցագործության ծանրության աստիճանը, ինչպես նաև պատիժը կրելու ժամկետը: Այստեղից բխում է, որ կարճաժամկետ մեկնում տրամադրելու համար օրենսդիրը նախատեսել է երկու հիմք՝

1) անձնական բացառիկ հանգամանքների առկայությունը և՝

2) սոցիալական վերականգնման նպատակը:

Այս երկու հիմքից որևէ մեկի առկայության դեպքում կարճաժամկետ մեկնում տրամադրելու հարցը որոշելիս՝ հիմնարկի պետը հաշվի է առնում **դատապարտյալի անձը և նրա դրսևորած վարքագիծը, կատարած հանցագործության ծանրության աստիճանը, ինչպես նաև պատիժը կրելու ժամկետը:**

Այս համատեքստում օրենսդիրը կարճաժամկետ մեկնումը չի դիտարկում որպես խրախուսանքի միջոց, ինչպես առաջարկվում է նախագծում: Օրենսգրքի 51-րդ, 58-րդ և 93-րդ հոդվածներով նախատեսված խրախուսանքի միջոցների շարքում կարճաժամկետ մեկնումը նախատեսված է:

Նշված կարգավորումների և նախագծով առաջարկվող կարգավորման համադրումից հետևում է, որ ընթերցանությունը կարող է դրական ազդեցություն ունենալ դատապարտյալի անձի կամ վարքագծի վրա, ինչը կարճաժամկետ մեկնում տրամադրելու հարցի որոշման շրջանակներում ենթակա է քննարկման: Այլ կերպ ասած՝ ընթերցանությունը չի կարող դիտարկվել կարճաժամկետ մեկնում տրամադրելու առանձին հիմք՝ չկազմելով ո՛չ անձնական բացառիկ հանգամանքների, ո՛չ սոցիալական վերականգնման բովանդակության մասը:

Ասվածից բացի, հարկավոր է նկատել, որ առաջարկվող կարգավորումը դրա իրացումն ապահովելու տեսանկյունից որոշակի չէ, մասնավորապես, հստակ չէ՝ ինչպե՞ս է որոշվելու դատապարտյալի կրթական մակարդակի փոփոխությունը, ի՞նչ ստուգիչ չափանիշներ են նախատեսվելու՝ ենթադրյալ փոփոխությունը գնահատելու համար, ովքե՞ր են լինելու այն պատասխանատու անձինք, որոնց վերապահված կլինի

դատապարտյալի կրթական մակարդակի փոփոխության ստուգումը: Բացի դրանից, նշված կարգավորմամբ անհրաժեշտություն կառաջանա նաև ստեղծելու անհրաժեշտ ռեսուրսներով այնպիսի հսկողական մեխանիզմ, որը հնարավորություն կտա վերահսկելու և ապահովելու ընթերցանության հետ կապված գործընթացի պատշաճ իրականացումը:

Այս առումով հարկավոր է նկատել, որ որոշակի չէ այն հարցը, թե ինչպես է գնահատվելու նաև ընթերցանության անմիջական ազդեցությունը դատապարտյալի անձի կամ վարքագծի վրա: Հայտնի չէ նաև, թե ինչ գրականության մասին է խոսքը, ո՞ր գրքերն են, որ կարող են նպաստել դատապարտյալի սոցիալական վերականգնմանը:

Նախագծի հիմնավորման ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ նախագծի հեղինակը դատապարտյալին ընթերցանությամբ պայմանավորված կարճաժամկետ մեկնում տրամադրելը դիտարկում է որպես դատապարտյալի ուղղման միջոց, որը նպաստում է դատապարտյալի վերասոցիալականացմանը: Այս համատեքստում հարկավոր է հաշվի առնել այն, որ, համաձայն օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի, դատապարտյալի ուղղման հիմնական միջոցներն են պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և այլ նման զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը:

Հաշվի առնելով վկայակոչված կարգավորումը՝ անհրաժեշտ է նշել, որ, չնայած կրթական զբաղվածությունը (դրա մեջ կարող է ընդգրկվել նաև ընթերցանությունը) դատապարտյալի ուղղման միջոցառումներից մեկն է, այնուամենայնիվ, դատապարտ-յալի ուղղումը, որպես պատժի նպատակ, ենթադրում է օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված համալիր միջոցառումների իրականացում, ինչը նշանակում է, որ

այդ նպատակի իրացումը պայմանավորված է նշված համալիր աշխատանքների միասնական իրացմամբ:

Ստացվում է, որ նախագծով առանձնացվում է դատապարտյալի ուղղման միջոցների շարքում ընդգրկված միջոցների ընդամենը մեկի բաղադրիչը և այն դիտարկվում է որպես դատապարտյալին խրախուսելու միջոց, ինչը խնդրահարույց է և ենթակա լրացուցիչ հիմնավորման: Բացի դրանից, այս առումով նախագծի հիմնավորման մեջ ներկայացված միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ, չնայած նախագծով առաջարկվում է գրքերի ընթերցանության դեպքում դատապարտյալին, որպես խրախուսանքի միջոց, **տրամադրել կարճաժամկետ մեկնում,** այդուհանդերձ, ներկայացված միջազգային փորձում՝ Բրազիլիայի և Իտալիայի Կալաբրիի տարածաշրջանի օրինակներում, **ընթերցանությունը պատժի ժամկետի կրճատման հիմք է, ինչը հանգեցնում է նախագծի կարգավորման առարկայի և դրա հիմքում դրված հիմնավորման միջև տրամաբանական կապի բացակայությանը:**

Միաժամանակ՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ, հաշվի առնելով քրեական պատիժների համակարգի արդիականացման և դրա նպատակայնության ապահովման հիմնախնդիրը, ներկայումս մշակվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական նոր օրենսգրքի նախագիծը, որով վերանայվելու են քրեակատարողական ոլորտի մայր օրենքում նշված բոլոր ինստիտուտները: Ըստ այդմ՝ ներկայացված առաջարկը (կարճաժամկետ մեկնումը նաև որպես խրախուսանքի միջոց կիրառելու մասով) կարող է քննարկման առարկա դարձվել Հայաստանի Հանրապետության քրեակատարողական նոր օրենսգրքի քննարկումների շրջանակներում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջարկը ենթադրում է կարճաժամկետ մեկնման ինստիտուտի վերաիմաստավորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2019 թվականի N 729 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Խաչիկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-122-30.04.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հունիսի 11
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-122-30.04.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի քրեակատարողական օրենսգրքի 93-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով.

«3. Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով գրքերի ընթերցանության դեպքում դատապարտյանին, որպես խրախուսանքի միջոց, սույն օրենսգքրի 81-րդ հոդվածով սահմանված կարգով տրամադրվում է սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնում:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդված 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաեւ կանխել հանցագործությունները: ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածը սահմանում է, որ «Դատապարտյալի ուղղումը մարդու, հասարակության, համակեցության կանոնների եւ ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձեւավորումն է, ինչպես նաեւ վերջիններիս օրինապահ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման եւ զարգացման նպատակով», իսկ ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 17-րդ հոդվածը սահմանում է պատժի կարեւորագույն նպատակներից մեկի՝ պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման եւ իրավահպատակ վարքագծի ձեւավորման ապահովման հիմնական միջոցները:

Ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման կարեւորությանը եւ դրանում քրեակատարողական համակարգի դերին անդրադարձ է կատարվել նաեւ ՄԱԿ-ի Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին դաշնագրում: Մասնավորապես, դրա 10-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասության համաձայն՝ քրեակատարողական համակարգը պետք է սահմանի ազատությունից զրկված անձանց հանդեպ այնպիսի վերաբերմունք, որի հիմնական նպատակը լինի նրանց ուղղումը եւ վերասոցիալականացումը:

Ազատությունից զրկված անձանց կողմից գրքեր կարդալու կարեւորության եւ դրա շրջանակներում նրա վերասոցիալականացումն ընդգծվում է նաեւ ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններում (Նելսոն Մանդելայի կանոններ), որի 40-րդ՝ «Գրքեր» վերտառությամբ կանոնի համաձայն՝ «Յուրաքանչյուր հիմնարկ պետք է գրադարան ունենա, որը հասանելի լինի բոլոր կատեգորիաների բանտարկյալների համար եւ պարունակի ինչպես զվարճալի, այնպես էլ կրթական բովանդակությամբ գրքեր: Պետք է խրախուսել բոլոր բանտարկյալների գրադարանից օգտվելը:»

Դատապարտյալների վերասոցիալականացման հարցում կարեւոր նշանակություն ունի ՀՀ ՔԿՕ-ով նախատեսված դատապարտյալների նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցների համակարգը, որը վերջին հաշվով նպատակ ունի նպաստելու դատապարտյալի իրավահպատակ վարքագծի ձեւավորմանը: Ուստի անհրաժեշտ է օրենքով նախատեսել քրեակատարողական հիմնարկներում բանտարկյալների ընթերցանությունը խրախուսող գործուն երաշխիքներ:

Հաշվի առնելով վերոգրյալը, սույն օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցների համակարգում նախատեսել սոցիալական վերականգման նպատակով կարճաժամկետ մեկնման տրամադրումը ուղղիչ հիմնարկի ներքին կանոնակարգով սահմանված կարգով գրքեր կարդալու դեպքում:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ մի շարք պետություններում գոյություն ունեն քրեակատարողական հիմնարկներում ընթերցանությունը խրախուսող մեխանիզմներ: Մասնավորապես, Բրազիլիայում 2011թ. ընդունվել է օրենք, որի համաձայն յուրաքանչյուր ընթերցված գրքի դիմաց ազատազրկման դատապարտված անձի ազատազրկման ժամկետը կրճատվում է 4 օրով, բայց ոչ ավելի, քան տարվա մեջ 48 օր: Մեկ գիրք կարդալու համար նրանց տրամադրվում է 21-30 օր, որից հետո նրանք պետք է գրեն գրքի բովանդակությունը ամփոփող շարադրություն կամ էսսե: Ընդ որում՝ շարադրանքը պետք է ունենա քերականական ու տրամաբանական ճիշտ կառուցվածք եւ արտահայտի գրքում արծարծվող հիմախնդիրները եւ կարեւոր շեշտադրումները դատապարտյալի կողմից ըմբռնելու փաստը: Իտալիայի Կալաբրիի տարածաշրջանային կոմիտեն եւս ընդունել է նախագիծը, որով նախատեսվում է գրքեր կարդալու դիմաց կրճատել պատժի ժամկետը յուրաքանչյուր գրքի դիմաց 3 օրով: Մեկ տարում այս եղանակով կարելի է կրճատել մինչեւ 48 օր, որից բխում է, որ բանտարկյալը կարող է 1 տարվա ընթացքում 16 գիրք կարդալ:

Կարդացած գրքերի դիմաց կարճաժամկետ մեկնման տրամադրումը՝ որպես խրախուսանքի միջոց նախատեսումը հնարավորություն կտա քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց արդյունավետորեն օգտագործել իրենց ազատ ժամանակը, իսկ ընթերցանության արդյունքում ձեռք բերված գիտելիքները հնարավորություն կտան ավելի հեշտ եւ արագ վերաինտեգրվել հասարակությանը: Ի լրումն ասվածի, առաջարկվող խրախուսանքի միջոցի նախատեսումը կընդգծի քրեակատարողական օրենսդրության մարդասիրական ուղղվածությունը՝ նպաստելով դատապարտյալի իրավահպատակ վարքագծի ձեւավորմանը, սեփական անձը եւ շրջապատողներին հարգելու ունակության ձեւավորմանը, ինչպես նաեւ կօգնի ընթերցանության միջոցով չեզոքացնել կամ նվազագույնի հասցնել դատապարտյալների միջավայրին ներհատուկ սոցիալ-հոգեբանական բացասական երեւույթները: